ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1961 Общественные науки

Վ. Ս. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ

Շինարարական կազմակերպությունների մասնագիտացումը հանդես է գալիս որպես նրանց ինդուստրացման և խոշորացման հետևանք։ Խոշորացումը ենթադրում է շինարարական կազմակերպությունների տերիտորիալ և գերատեսչական կենտրոնացում։ Շինարարության տերիտորիալ կենտրոնացումը առանձնապես լայն ծավալ է ընդունում ինքնակարանային շինարարության մեջ։

Շինարարական կազմակերպությունների խոշորացումը ինդուստրինության պրոգրեսիվ տնտեսական երևույթ է։ Խոշոր շինարարական կազմակերպությունները մանրերի համեմատությամբ ունեն մի շարք առավելություններ։ Նրանք հնարավորություն ունեն ստեղծելու հզոր արտադրական բազա, ապահովելու շինարարական մեքենաների ու մեխանիզմների ժամանակին վերանորոգումը և լրիվ ծանրաբեռնվածությամբ օգտագործումը։ Շինարարության խոշոր ծավալը, մանավանդ տերիտորիալ կենտրոնացման և մասիվային շինարարություն կատարելու դեպքում, հնարավորություն է տալիս լայն չափերով արմատավորելու արտադրության հոսքային մեթոդները, ապահովելու շինարարական աշխատանքների ռիթմիկ ընթացքը, շինանյութերի ու բանվորական ժամանակի ռացիոնալ օգտագործումը, կրճատելու նյութական ու ֆինանսական միջոցների կորուստները։ Խոշոր շինարարական կազմակերպություններում ավելի բարենպաստ պայմաններ կան որակյալ շինարար կադրեր պատրաստելու և տեղում ամրապնդելու համար, որը աշխատանքի արտադրողականության բարձրացման և շինարարության արժեքի իջեցման կարևոր գործոններից մեկն է։ Խոշոր շինարարական կազմակերպություններում որպես կանոն շահութաբերությունը բարձր է, քան մանրերում։

Շինարարության մեջ մասնագիտացումը ընթանում է երկու հիմնական ուղղությամբ։ Մի դեպքում շինարարական կազմակերպությունները մասնագիտանում են առանձին կամ համանման շինմոնտաժային աշխատանքներ կատարելու մեջ, իսկ մյուս դեպքում՝ ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերին պատկանող օբյեկտներ կառուցելու մեջ։ Այսպես, օրինակ, որոշ շինարարական կազմակերպություններ մասնագիտանում են քիմիական, սննդի արդյունաբերության արտադրական օբյեկտների կառուցման մեջ և այլն։ Առաջին դեպքում մասնագիտացված շինարարական կազմակերպությունը կատարում է շինմոնտաժային աշխատանքների միայն մի մասը, իսկ երկրորդ դեպքում մեծ մասամբ շինմոնտաժային աշխատանքների ամբողջ կոմպլեքսը։

Ըստ շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների մասնագիտացված կազմակերպություններ են ստեղծվում շինարարության մինիստրությունների և խոշոր քաղաքներում ստեղծված շինարարության գլխավոր վարչությունների կազմում։ Ժողտնտխորհների կազմում, ուր տիրապետում է ճյու-

դային կառուցվածքը, ստեղծվում են շինարարական կազմակերպություններ որոնք մասնագիտանում են ժողովրդական տնտեսության այս կամ այն ճյուղին պատկանող օբյեկտների շինարարության մեջ։

Տվյալ հոդվածում քննարկվում են շինարարական արդյունաբերության ձեռնարկությունների մասնագիտացման հարցերը Սովետական Միությունում և ռեսպուբլիկայում։ Ընդհանրացվում է մասնագիտացման փորձը երկրի առաջավոր ձեռնարկություններում և ռեսպուբլիկայում, կոնկրետ առաջարկություններ են արվում Հայաստանի շինարարական արդյունաբերության ձեռնարկությունների մասնագիտացման հետագա բարելավման ուղղությամբ։ Հոդվածում բերված փաստացի նյութերը վերցված են համապատասխան ձեռնարկությունների ու կազմակերպությունների տարեկան հաշվապահական հաշվետվություններից։

Շինարարության կառավարումը վերակառուցելուց հետո շինարարական կազմակերպությունների մասնագիտացումն ընթանում է հետևյալ հիմնական սկզբունքներով.

Շինարարական կազմակերպությունները կենտրոնացվում են շինարարության մինիստրություններում կամ ժողտնտեսխորհների շինարարության վարչություններում։ Շինարարությունը ըստ տերիտորիալ սկզբունքի բաշխվում է առանձին խոշորացված շինարարական կազմակերպությունների միջև։ Նախկին մի քանի շինարարական կազմակերպությունների փոխարեն որոշակի տերիտորիայում շինարարություն է կատարում մեկ կազմակերպություն՝ իր մասնագիտացված վարչություններով և տեղամասերով։

Շինարարական կազմակերպությունների մասնագիտացումը մեկ սիստեմի ներսում կատարվում է ըստ շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների, ըստ ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի, իսկ համաշինարարական կազմակերպությունները մասնագիտանում են առանձին տեսակի կառուցվածքների շինարարության մեջ։ Այսպես, օրինակ, բնակարանային շինարարության մեջ, քաղաքացիական շինարարության մեջ և այլն։

Շինարարական կազմակերպությունների խոշորացումը և մասնագիտացումը ենթադրում է շինարարության միասնական քաղաքականություն։ Այդ արտահայտվում է գործարանային արտադրության կոնստրուկցիաների ու դետալների կիրառման, շինարարության հավաքայնության բարձրացման, տիպային նախագծերով մասսիվային շինարարության ծավալման, շինարարության առաջավոր մեթոդների արմատավորման, աշխատանքի մեթոդների կատարելագործման, շինմոնտաժային աշխատանքների որակի բարձրացման մեջ։

Շինարարական կազմակերպությունները մասնագիտանում են ըստ շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների, որոնց գծով ստեղծվում են մասնագիտացված շինարարական կազմակերպություններ։ Շինարարության բարձր ինդուստրացման պայմաններում մասնագիտացված կազմակերպություններ են ստեղծվում ըստ մեքենայական աշխատանքների առանձին տեսակների։ Այդպիսի կազմակերպություններում կենտրոնացվում են էքսկավատորները, բուլդոզերները, կոմպրեսորները, աշտարակային ամրարձիչները և այլ շինարարական մեքենաներ և մեխանիզմներ։ Մեքենայացման կազմակերպությունները կատարում են հողային աշխատանքները, շենքերի ծածկման աշխատանքները խոշոր երկաթբետոնե կոնստրուկցիաներից և այլն։ Այդ

կազմակերպություններում ստեղծվում են համապատասխան թվով վարչություններ և տեղամասեր, որոնցից յուրաքանչյուրը սպասարկում է մեկ համաշինարարական տրեստի։ Այսպես, Դլավմոստրոյում ստեղծված են հետևյալ տրեստները. Հողային աշխատանքների մեքենայական կատարման տրեստ, Աշտարակային ամբարձիչների շահագործման տրեստ, Բեռնման և բեռնաթափման աշխատանքների մեքենայացման ու հատուկ մեքենաների շահագործման տրեստ, Շինարարական և ճանապարհային մեքենաների վերանորոգման տրեստ, Ճանապարհային-տրանսպորտային աշխատանքների մեքենայացման տրեստ։ Այդ հնարավորություն տվեց անցնելու շինարարական մեքենաների ու մեխանիզմների վերանորոգման ագրեգատային սիստեմին, որը մի բանի անգամ կրճատեց մեքենաների և մեխանիզմների ուղարկումները, մեքենաների պարկի պատրաստակամության գործակիցը հասցրեց 95-ի և այլն։

Շատ տնտեսական շրջաններում մասնագիտացված շինարարական կազմակերպություններ են ստեղծվում վերջնամշակման և սանտեխնիկական աշխատանքների գծով։ Ըստ վերջնամշակման աշխատանքների առանձին տեսակների, կազմակերպվում են տրեստներ, վարչություններ կամ տեղամասեր։ Վերջնամշակման մասնագիտացված կազմակերպությունները տեղաբաշխվում են տերիտորիալ սկզբունքներով։ Յուրաքանչյուր կազմակերպություն իր տերիտորիայում կատարում է վերջնամշակման աշխատանքների ամբողջ կոմպլեքսը։ Այդ կազմակերպությունները սովորաբար ունենում են փրկնց արտադրական բազաները՝ ներկերի կենտրոնացված պատրաստման արհեստանոցների, ապակու կենտրոնացված կտրման արհեստանոցների ձևով և այլն։ Սան-տեխնիկական աշխատանքների գծով նույնպես ստեղծվում են մասնագիտացված տրեստներ, վարչություններ և տեղամասեր։ Այդ կազմակերպությունները սան-տեխնիկական աշխատանքները կատարում են ինդուստրիալ մեթոդներով։ Սան-տեխնիկական աշխատանքներ կատարող տրեստներն ունեն արտադրական բազաներ, ուր պատրաստվում են խոշորացված սան-տեխնիկական հանգույցներ։ Մասնագիտացված շինարարական կազմակերպություններ են ստեղծվում նաև էլեկտրա-մոնտաժային աշխատանքների գծով։ Սրանց հիմնական նպատակը, ինչպես նաև սան-տեխնիկական աշխատանքների տրեստների հիմնական նպատակը աշխատանքների առավելագույն մեքենայացումն է։ Սովորաբար յուրաքանչյուր համաշինարարական տրեստին կցվում է մեկ մասնագիտացված կազմակերպություն։

Մասնագիտացված շինարարական կազմակերպությունների կողքին դեռևս կան մեծ թվով համաշինարարական կազմակերպություններ, որոնց բաժին է ընկնում շինմոնտաժային աշխատանքների ամբողջ ծավալի գերակշռող մասը։ Այդ կազմակերպությունների մասնագիտացումը ընթանում է համաշինարարական աշխատանքների առանձին տեսակների գծով։ Այսպես, մասնագիտացված կազմակերպություններ են ստեղծված զերո ցիկլի, պատերի շարման աշխատանքների գծով և այլն։

Շինարարական կազմակերպությունների խոշորացումը և մասնագիտացումը ենթադրում է շինանյութերի արտադրության, նրանց փոխադրման և նախագծման գործի համապատասխան կազմակերպում։ Ստեղծվում են շինանյութերի արդյունաբերության նեղ մասնագիտացված ձեռնարկություններ, մատակարարման հատուկ տրեստներ, կազմակերպվում են շինանյութերի կենտրոնացված փոխադրումներ և ավելի լայն չափերով են կիրառվում տի-

պայմն սախագծերը։ Այդ տեսակետից գործը ամենից ավելի լավ է կազմակերպված Մոսկվա, Լենինգրադ, Կիև և Կույբիշև քաղաքներում։

Շինարարական կազմակերպությունների մասնագիտացման ամենից գլխավոր արդյունքներն են աշխատանքային պրոցեսների առավելագույն մեքենայացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը և արժեքի իջեցումը։ Շինարարական կազմակերպությունների մասնագիտացման խորացումը հանգեցնում է այն բանին, որ տնտեսական կապերի բարդ սիստեմ է ստեղծվում տարբեր շինարարական կազմակերպությունների միջև, շինարարական կազմակերպությունների ու շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունների միջև և այլն։ Այդ կապերը մասամբ կրում են մատակարարման բնույթ, իսկ մասամբ կոոպերացման բնույթ։ Կոոպերացման կապերը շինարարության մեջ իրականացվում են համաշինարարական և մասնագիտացված տրեստների միջև պայմանագրեր կնքելու միջոցով։ Կոոպերացման կապերի ձևերը անընդհատ զարգանում ու կատարելագործվում են, որի հիմքում ընկած է շինարարական աշխատանքների ինդուստրացումը։

Ինդուստրացումը ամենից բարձր մակարդակի է հասնում տնաշինարարական կոմբինատներում։ Տնաշինարարական կոմբինատները իրականացնում են շինարարական կոնստրուկցիաների արտադրությունը և նրանց մոնտաժավորումը։ Այդ նշանակում է, որ տնաշինարարական կոմբինատներում տեղի է ունենում շինանյութերի արտադրության և բուն շինարարական պրոցեսների միաձուլում։ Դրա հետ մեկտեղ նույն ձեռնարկությունում են կենտրոնացվում տարբեր շինարարական պրոցեսներ։ Հետևաբար շինարարության մեջ մասնագիտացումն ընթանում է մի կողմից շինարարական առանձին պրոցեսների անջատման, իսկ մյուս կողմից դրանք մեկ ձեռնարկությունում կենտրոնացնելու ուղղությամբ։

Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը ամենալայն հնարավորություններն է ստեղծել շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների հետագա խոշորացման և մասնագիտացման համար։ Սակայն պետք է նշել, որ ստեղծված մեծ հնարավորությունները դեռևս օգտագործվում են անբավարար։ Շինարարական կազմակերպությունների մի մասը հանձնվեց շինարարության մինիստրություններին, իսկ մյուս մասը ժողտնտխորհներին ու տեղական սովետներին։ Նույնը կատարվեց նաև շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունների հետ։ Շինարարական կազմակերպությունների ու շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքի միջև դեռևս վերացված չէ զուգահեռականությունը, բացակայում է շինարարական կազմակերպությունների ու շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունների միասնական դերատեսչական պատկանելիությունը։

Ռնսպուրլիկայի տերիտորիայում շինարարություն են կատարում ՀՍՍՌ Շինարարության մինիստրության և ժողտնտխորհի շինարարական կազմակերպությունները, Գյուղատնտեսության մինիստրության կոլտնտշինվարչությունը, միջկոլտնտեսային շինարարական խորհուրդները, ինչպես նաև տեղական ու միութենական ենթակայության մի շարք շինարարական կազմակերպություններ։ Շինմոնտաժային աշխատանքների ամբողջ ծավալի հիմնական մասը կատարում են Շինարարության մինիստրության և ժողտնտխորհի շինարարական կազմակերպությունները՝ շուրջ 70,0 (նոր գրամով) միլիոն ռուբ-

լի, որից 42,0 միլիոն ռուբլին կամ ավելի քան 60 տոկոսը բաժին է ընկնում Շինարարության մինիստրության կազմակերպություններին. Այդ երկու սիստեմներում հաշվվում է 45 սկզբնական շինարարական կազմակերպություն, Մեկ շինարարական կազմակերպության շինմոնտաժային աշխատանքների տարեկան ծավալը կազմում է 1,8 միլիոն ռուբլի։

Շինարարական կազմակերպությունների ցրվածությունը տարբեր գերատեսչությունների միջև զգալիորեն ավելացնում է վերադիր ծախսերը՝ վարչական ապարատի պահպանման ծախսերը։ Ժողտնտխորհի Շինարարության վարչության ապարատում 1959 թ. աշխատում էր 50 մարդ, որոնց աշխատավարձի տարեկան ֆոնդը կազմում էր 72,0 հազար ռուբլի։ Շինարարության մինիստրության կենտրոնական ապարատի պահպանման ծախսերը գերազանցում են 100,0 հազար ռուբլին։ Պետք է նշել, որ 1957 թ. շինարարության կառավարումը վերակառուցելուց հետո ռեսպուբլիկայում գործող շինարարական կազմակերպությունները, ոչ մեծ բացառությամբ, հանձնվել էին Շինարարության մինիստրությանը։ Սակայն 1959 թ. հունվարի 1-ից արդյունաբերական շինարարություն կատարող շինարարական կազմակերպությունները հանձնվեցին Ժողտնտխորհին, ուր կազմակերպվեց Շինարարության վարչությունը։ Այդ վարչությանը հանձնվեցին արդյունաբերական շինարարություն կատարող տրեստները։ Առ 1 հունվարի 1960 թ. դրությամբ Ժողտնտխորհի Շինարարության վարչության կազմում կար 8 շինարարական տրեստ և 3 առանձին վարչություն, իսկ Շինարարության մինիստրության կազմում համապատասխանաբար 8 և 2։ Շինարարության կառավարման բարելավման շահերից ելնելով, նպատակահարմար է այդ բոլոր կազմակերպությունները հանձնել կամ Շինարարության մինիստրությանը, կամ Ժողտնտխորհի Շինարարության վարչությանը։ Այդ միջոցառումը միաժամանակ պայմաններ կստեղծի շինարարական կազմակերպությունների աշխատանքի տեխնիկա-տնտեսական ցուցանիշների բարելավման համար։

Ընդունած շինարարական կազմակերպությունների խոշորացման ուղղությամբ տարված որոշ աշխատանքների, ռեսպուբլիկայում շինարարական կազմակերպությունները դեռևս մնում են փոքրահզոր։ Շինարարության մինիստրության սիստեմում մեկ շինարարական վարչության շինմոնտաժային աշխատանքների տարեկան ծավալը տատանվում է 0,4—1,2 միլիոն ռուբլու սահմաններում, իսկ շինարարական տրեստում՝ այն չի գերազանցում 7,4 միլիոն ռուբլին։ Ժողտնտխորհի Շինարարության վարչությունում դրանք կազմում են համապատասխանաբար 1,1—1,7 և 5,5 միլիոն ռուբլի։ Մի շարք տնտեսական շրջաններում, ինչպես, օրինակ, Կույբիշևի շինարարական տրեստի շինմոնտաժային աշխատանքների միջին տարեկան ծավալը կազմում է 16,7 միլիոն ռուբլի, իսկ շինվարչությանը՝ 3,0 միլիոն ռուբլի։ Այդ վկայում է ռեսպուբլիկայի շինարարական կազմակերպությունների խոշորացման մեծ հնարավորությունների մասին։ Դրա նպատակահարմարությունն ապացուցելու համար բավական է ասել, որ 2,0—2,5 միլիոն ռուբլու շինմոնտաժային աշխատանքների տարեկան ծավալ ունեցող կազմակերպություններում ինքնարժեքը 8—11 տոկոսով ցածր է, քան 1,0 միլիոն ռուբլու ծավալ ունեցող կազմակերպություններում։

Ռեսպուբլիկայի շինարարական կազմակերպությունների գերատեսչական ցրվածության ու փոքրահզորության ուղղակի հետևանքը նրանց թույլ մասնա-

գիտացումն է։ Եռ 1 հունվարի 1960 թ. դրությամբ ՀՍՍՌ Շինարարության մինիստրությունն ուներ 2 մասնագիտացված շինարարական տրեստ, 1 վարչություն և 7 համաշինարարական տրեստ։ 1960 թ. ստեղծվում է ալյումարակային ամրարձիչների վարչություն. Մասնագիտացված շինարարական կազմակերպությունների տեսակարար կշիռը շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալի մեջ կազմում է 12,1 տոկոս։ Մինչդեռ, մի շարք կազմակերպություններում դրանց տեսակարար կշիռը շատ ավելի բարձր է։ Օրինակ, Գլավկինստրոյում մասնագիտացված կազմակերպությունների տեսակարար կշիռը կազմում է շուրջ 45 տոկոս։

Հայաստանի ժողտնտխորհի շինարարական կազմակերպությունները հիմնականում մասնագիտացված են ճյուղային սկզբունքով։ Այսպես, օրինակ, քիմիական արդյունաբերության օբյեկտներն կառուցման գծով ստեղծվել է «Հայքիմարդշին» տրեստը և այլն։ Արդյունաբերական օբյեկտներից բացի ժողտնտխորհի շինարարական կազմակերպությունները կառուցում են նաև բնակելի շենքեր ու կուլտուր-կենցաղային օբյեկտներ։ Այսպես, օրինակ, այդ կազմակերպությունները 1959 թ. շահագործման են հանձնել 18,6 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, որը կազմում է Շինարարության մինիստրության բնակարանային շինարարության ծավալի շուրջ 10,6 տոկոսը։ Դա նշանակում է, որ ռեսպուբլիկայում կան շինարարական կազմակերպությունների մասնագիտացման խորացման մեծ հնարավորություններ։

Մասնագիտացված շինարարական կազմակերպությունները համաշինարարականների համեմատությամբ ունեն խոշոր առավելություններ։ Մասնագիտացված շինարարական կազմակերպություններում համեմատաբար բարձր է աշխատանքի արտադրողականությունը։ 1959 թ. Շինարարության մինիստրության № 8 մասնագիտացված տրեստում մեկ աշխատողի միջին տարեկան արտադրանքը կազմում էր 443,1 ռուբլի, իսկ համաշինարարական տրեստներում այն չէր գերազանցում 355,1 ռուբլի, № 8 տրեստի համեմատությամբ, այնտեղ աշխատանքի արտադրողականությունը ցածր է 20—36,7 տոկոսով։ Մասնագիտացված շինարարական կազմակերպություններում համեմատաբար ցածր է շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը։ Եթե մեկ միլիոն ռուբլի շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը № 8 մասնագիտացված տրեստում ընդունենք 100, ապա այն № 1 շինարարական տրեստում կկազմի 114,2 տոկոս, № 2 տրեստում՝ 106,7 տոկոս, № 4 տրեստում՝ 109,7 տոկոս, № 6 տրեստում՝ 103,5 տոկոս և № 11 տրեստում 119,0 տոկոս կամ ընդհանուր առմամբ վերցրած 3,5—19,0 տոկոսով բարձր, քան № 8 տրեստում։ Մասնագիտացված շինարարական կազմակերպությունների առավելություններից մեկն է։ կայանում է նրանում, որ այնտեղ ավելի ռացիոնալ են օգտագործվում հիմնական ֆոնդերը։ Շինարարության մինիստրության համաշինարարական տրեստներում մեկ ռուբլու հիմնական ֆոնդի դիմաց ստացված շինմոնտաժային աշխատանքների ծավալը չի գերազանցում 1 ռուբլին, իսկ № 8 մասնագիտացված տրեստում այն կազմում է 1,1 ռուբլի։ Ժողտնտխորհի մասնագիտացված շինարարական կազմակերպություններում այն հասնում է մինչև 15—20 ռուբլու։

Եթե համեմատենք շինարարական կազմակերպությունների մասնագիտացման երկու ձևերը, ապա կարելի է ասել, որ տնտեսապես ավելի նպատակահարմար է մասնագիտացումը ըստ շինմոնտաժային աշխատանքների

առանձին տեսակների։ Այդ տիպի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունները ունեն տնտեսական գործունեության ավելի լավ տեխնիկատնտեսական ցուցանիշներ։ Այսպես, օրինակ, ԵԻԻ Շինարարության մինիստրության № 8 մասնագիտացված տրեստում մեկ աշխատողի միջին տարեկան արտադրանքը կազմում է 443,1 ռուբլի, ապա ժողտնտխորհի Շինարարության վարչության «Հայբիմարդշին» տրեստում, ուր աշխատանքի արտադրողականությունը ամենից բարձր է, այն կազմում է 390,2 ռուբլի կամ 11,5 տոկոսով պակաս։ № 8 տրեստում բարձր է նաև մեկ աշխատողի միջին տարեկան աշխատավարձը։

Հետևաբար շինարարական կազմակերպությունների մասնագիտացումը պետք է խրախուսել առաջին հերթին ըստ շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների։ Մասնավորապես Շինարարության մինիստրության կազմում մասնագիտացված կազմակերպություններ պետք է ստեղծվեն ըստ համաշինարարական աշխատանքների առանձին տեսակների, բեռնման ու բեռնաթափման աշխատանքների գծով և այլն։ Ժողտնտխորհի Շինարարության վարչության կազմում ճյուղային շինարարական կազմակերպությունների հետ միասին անհրաժեշտ է ստեղծել նաև շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների գծով մասնագիտացված շինարարական կազմակերպություններ։ Դրա հնարավորության մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ շինարարական աշխատանքների մի զգալի մասը, անկախ արդյունաբերության տվյալ ճյուղի առանձնահատկություններից, կրում է ընդհանուր բնույթ։ Ասենք, վերջնամշակման, ներկարարական, զերո ցիկլի աշխատանքները, բացառությամբ արդյունաբերության մի քանի ճյուղերից և այլն։ Շինարարական կազմակերպությունների հետագա մասնագիտացման հարցը կարելի է ռացիոնալ ձևով լուծել ռեսպուբլիկական ենթակայության բոլոր կազմակերպությունները մեկ գերատեսչության հանձնելու պայմանով։

Շինարարական կազմակերպությունների խոշորացումը և մասնագիտացումը պահանջում է համապատասխանորեն խոշորացնել և մասնագիտացնել նաև շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունները։ Ռեսպուբլիկայում շինանյութեր են թողարկում Ժողտնտխորհի Շինանյութերի արդյունաբերության վարչության ձեռնարկությունները, Ժողտնտխորհի Շինարարության վարչության ձեռնարկությունները, տեղական ենթակայության ձեռնարկությունները, Շինարարության մինիստրության ձեռնարկությունները և այլն։ Ժողտնտխորհի Շինանյութերի արդյունաբերության վարչությունը և Շինարարության մինիստրությունն ունեն 15-ական արդյունաբերական ձեռնարկություն, իսկ Ժողտնտխորհի Շինարարության վարչությունը՝ 9 ձեռնարկություն։ Մեկ ձեռնարկության արտադրանքի միջին տարեկան ծավալը Ժողտնտխորհի Շինարարությունների արդյունաբերության վարչության սիստեմում կազմում է 1,4 միլիոն ռուբլի, Շինարարության մինիստրության սիստեմում՝ 0,9 միլիոն ռուբլի և Ժողտնտխորհի Շինարարության վարչության սիստեմում՝ 0,7 միլիոն ռուբլի։ Ավելի փոքրահզոր են տեղական ենթակայության և այլ գերատեսչություններին պատկանող ձեռնարկությունները։ Շինանյութերի համախառն արտադրանքի համարյա 50 տոկոսը թողարկում են Շինանյութերի արդյունաբերության վարչության ձեռնարկությունները։

Չնայած իրենց փոքր հզորությանը, Շինարարության մինիստրության և Ժողտնտխորհի Շինարարության վարչության արդյունաբերական ձեռնարկու-

թյունները թողարկում են մեծ թվով շինանյութեր, շինարարական դետալներ և կոնստրուկցիաներ, որոնք ունեն տարբեր չափսեր։ Միևնույն շինանյութից տարբեր քանակությամբ թողարկում են մի շարք ձեռնարկություններ։ Նայած արտադրության ծավալին և արտադրական պրոցեսների մեքենայացման մակարդակին, տարբեր է շինանյութերի մեկ միավորի ինքնարժեքը։ Այդ ցույց տանք Շինարարության մինիստրության արդյունաբերական ձեռնարկությունների օրինակով։

Երևան քաղաքում 1958 թ. պեմզաբլոկներ էին թողարկում Շինարարության մինիստրությանը պատկանող հինգ ձեռնարկություններ։ Այդ ձեռնարկություններում պեմզաբլոկի տարեկան արտադրությունը կազմում է 2073 հազար հատ։ Պեմզաբլոկների այդ քանակից 1910 հազար հատ կամ 92 տոկոսը թողարկում է Երևանի շինարարական առարկաների գործարանը, որը կազմում է նրա համախառն արտադրանքի մոտավորապես 44 տոկոսը։ Պեմզաբլոկների արտադրության այդպիսի ծավալը հնարավորություն է ստեղծել արտադրական պրոցեսների մեքենայացման համար։ Այստեղ մեկ հատ պեմզաբլոկի ինքնարժեքը 3—5 կոպեկով ցածր է, քան մյուս ձեռնարկություններում, որոնք թողարկում են նույն տեսակի պեմզաբլոկներ, բայց ընդամենը մի քանի հազար հատ։

Միջնորմներ են թողարկում Երևան քաղաքում գտնվող Շինարարության մինիստրությանը պատկանող երեք ձեռնարկություններ։ Միջնորմների տարեկան արտադրությունը այդ ձեռնարկություններում կազմում է 167 հազար քառակուսի մետր, որից 162 հազար քառակուսի մետրը, կամ 97 տոկոսը թողարկում է Երևանի շինարարական առարկաների գործարանը։ Այդ պատճառով այստեղ մեկ քառակուսի մետր միջնորմի ինքնարժեքը 7 կոպեկով ցածր է, քան № 9 շինարարական տրեստի երկաթբետոնյա առարկաների գործարանում, որի տարեկան արտադրանքը կազմում է ընդամենը 4,5 հազար քառակուսի մետր։

Մոզայիկ սանդուղքների արտադրությունը Շինարարության մինիստրության Երևանում գտնվող երեք ձեռնարկություններում 1958 թ. կազմել է 41 հազար գծային մետր։ Դրանից 35 հազար գծային մետրը, կամ 75 տոկոսը, նույնպես թողարկում է Երևանի շինարարական առարկաների գործարանը։ Այդ գործարանում մեկ գծային մետրի ինքնարժեքը 1—1,5 ռուբլով ցածր է, քան մյուս երկու ձեռնարկություններում։

Հետևաբար, նշված շինարարական առարկաների արտադրության կենտրոնացումը Երևանի շինարարական առարկաների գործարանում պայմաններ կստեղծի շինանյութերի ինքնարժեքի և շինարարության արժեքի իջեցման համար։ Այդ գործարանը արտադրական կարողությունները լրիվ օգտագործելու և համապատասխան քանակությամբ հումքով ապահովված լինելու դեպքում, կարող է լիովին բավարարել Երևանի շինարարական կազմակերպությունների պահանջները։

Խոշոր թերություններ կան նաև երկաթբետոնե առարկաների և խոշոր շինարարական կոնստրուկցիաների արտադրության կազմակերպման գործում։ Այստեղ նույնպես բացակայում են ձեռնարկությունների մասնագիտացումը որոշակի տեսակի շինանյութերի արտադրության մեջ, ձեռնարկությունները թողարկում են բազմաթիվ շինանյութեր։ Երևան քաղաքում 1958 թ. երկաթբետոնե առարկաներ ու կոնստրուկցիաներ էին արտադրում 6 ձեռնարկություն-

ներ, տարեկան 70 հազար խորանարդ մետր ծավալով։ Այդ ձեռնարկություն-ներից մեկը, № 1 երկաթբետոնե առարկաների գործարանը, տարեկան թողարկում է մոտավորապես 27 հազար խորանարդ մետր կամ ամբողջ արտադրանքի 57,3 տոկոսը։

Անտառանյութի վերամշակումը և ատաղձագործական առարկաների արտադրությունը ցրված է ավելի քան ինն արդյունաբերական ձեռնարկություններում, որոնք տարեկան վերամշակում են մոտ քսան հազար խորանարդ մետր անտառանյութ, 125 հազար քառակուսի մետր դռների և լուսամուտների փեղկեր ու որոշ քանակությամբ այլ ատաղձագործական առարկաներ։ Առանձին ձեռնարկություններում մեկ խորանարդ մետր անտառանյութի վերամշակման ծախսերը տատանվում են 30—43 ռուբլու սահմաններում։ Խիստ կերպով տատանվում է նաև մեկ քառակուսի մետր դռան և լուսամուտի ինքնարժեքը։ Գործի լավ կազմակերպման դեպքում այդ առարկաների արտադրությունը նույնպես կարելի է կենտրոնացնել մեկ մասնագիտացված խոշոր ձեռնարկությունում, որը զգալի չափով կնպաստի շինարարության ինքնարժեքի իջեցմանը։

ՀՍՍՌ Շինարարության մինիստրության Երևան քաղաքում գտնվող արդյունաբերական ձեռնարկություններից մի բանիսում թողարկվող շինանյութերի ու շինարարական կոնստրուկցիաների թիվը հասնում է մինչև 25-ի։ Պարզ է, որ այդպիսի պայմաններում վերին աստիճանի դժվար է անցկացնել արտադրության մասնագիտացում։ Նշված արդյունաբերական ձեռնարկությունների բազմասորտիմենտայնությունը և առհասարակ նրանց մեծ թիվը պետք է բացատրել նրանով, որ ամեն մի շինարարական տրեստ, ելնելով իր նեղ շահերից, ձգտել և ձգտում է ունենալ շինանյութերի սեփական արտադրություն՝ անկախ նրա թանկ կամ էժան լինելուց, որը չի կարելի կանոնավոր երևույթ համարել, քանի որ այն հակասում է ժողովրդական տնտեսության շահերին։ Ն. Ս. Խրուշչովը պարտիայի XXI համագումարում ասել է, որ պետք է վճռականորեն վերջ տալ յուրաքանչյուր կառույցին առանձին իրենցից հաճախ կիսատնայնագործական արտադրական բազաների ստեղծման սխալ պրակտիկային, հարկավոր է կազմակերպել շինարարական ինդուստրիայի ձեռնարկությունների շրջանային սիստեմ՝ տնտեսական շրջանի շինարարության կամ կենտրոնացված շինարարության հանգույցի կարիքների բավարարման համար։

Անհրաժեշտ է վերացնել շինարարական տրեստների մանր ձեռնարկությունները և դրանց փոխարեն ստեղծել մի քանի խոշոր մասնագիտացված արդյունաբերական ձեռնարկություններ, այն հաշվով, որպեսզի արտադրական նվազագույն ծախքերով լիովին բավարարեն Երևան քաղաքի շինարարական կազմակերպությունների պահանջները։ Այդ նույն բանը պետք է ձեռնարկել նաև Լենինականում, Կիրովականում և այլն, ուր միևնույն շինանյութերը զանազան քանակությամբ թողարկում են տարբեր ձեռնարկություններում։

Մեր կարծիքով նպատակահարմար է Շինարարության մինիստրության շինանյութերի բոլոր ձեռնարկությունները հանձնել ռեսպուբլիկայի Ժողտնտխորհի շինանյութերի արդյունաբերության վարչությանը։

Շինարարական արդյունաբերության խոշորացումը և մասնագիտացումը ենթադրում է նաև մատակարարման կազմակերպությունների ու շինանյութերի փոխադրումների կենտրոնացում։ Կույբիշևում Ժողտնտխորհի և նրա Շինարարության վարչության կազմակերպումից հետո վերացվեցին նախկին շինարարական տրեստների մատակարարման գրասենյակները և կազմակերպ-

վեց մեկ միասնական մատակարարման տրեստ, որը մի կողմից էժանացրեց մատակարարման աշխատանքները, իսկ մյուս կողմից ավելացրեց շինանյութերով մանևրա կատարելու հնարավորությունները։ Այդ նույնն անհրաժեշտ է անել նաև մեր ռեսպուբլիկայում։ ՀՍՍՌ Շինարարության մինիստրության մատակարարման ցանցում աշխատում է 126 մարդ, որոնց աշխատավարձի տարեկան ֆոնդը կազմում է 111,1 հազար ռուբլի։ Նրանցից 74-ը կամ 60 տոկոսը, 61,6 հազար ռուբլի աշխատավարձի տարեկան ֆոնդով աշխատում են շինարարական տրեստների մատակարարման բաժիններում։ Դործը շահած կլիներ, եթե լիկվիդացիայի ենթարկվեին այդ բաժինները և մատակարարման ֆունկցիան ամբողջովին դրվեր Շինարարության մինիստրության նյութատեխնիկական մատակարարման վարչության վրա, կամ կազմակերպվեր մատակարարման հատուկ տրեստ։

Մատակարարման գործի կենտրոնացումը պահանջում է ավտոտրանսպորտի և փոխադրումների համապատասխան կազմակերպում։ Կուլրիշևում և Լենինգրադում կենտրոնացվեցին շինարարական կազմակերպությունների բոլոր ավտոմեքենաները և անցան շինանյութերի կենտրոնացված փոխադրումներին։ Ընդ որում Լենինդրադում հաշվարկները շինարարական կազմակերպությունների և ավտոտրանսպորտի միջև կատարվում են ոչ թե տոննա կիլոմետրերով, այլ փոխադրված բեռների քանակով, անկախ փոխադրումների հեռավորությունից։ Նախօրոք որոշվում է բեռների փոխադրման միջին հեռավորությունն ու արժեքը՝ գործող տարիֆների հիման վրա։ Լենինգրադում մատակարարող կազմակերպությունը յուրաքանչյուր փոխադրված մեկ տոննա բեռի համար ավտոտրանսպորտին վճարում է 60 կոպեկ։ Հաշվարկների համար հիմք է ծառայում ապրանքա-տրանսպորտային նակլադնոյը, որը վերացնում է հավելագրումների հնարավորությունը՝ մի բան, որ հաճախ արվում է մեզ մոտ։ Ասվածից երևում է, որ անհրաժեշտ է մասնագիտացնել շինանյութեր փոխադրող ավտոտրանսպորտը, անցնել շինանյութերի կենտրոնացված փոխադրումներին և հաշվարկների նշված ձևին։

Շինարարական արդյունաբերության մասնագիտացումը կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն ունի։ Ռեսպուբլիկայում դեռևս անբավարար են օգտագործվում այդ ասպարեզում եղած հնարավորությունները։ Անհրաժեշտ է վերացնել տեղ գտած թերությունները և առավելագույն չափով մասնագիտացնել շինարարական արդյունաբերության ձեռնարկությունները և կազմակերպությունները։